ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՆԻՍՏԻ

ք. Երևան «31» հունվարի 2022թ.

2022 թվականի հունվարի 26-ին տեղի ունեցավ ՔՏՀԱ տեսչական մարմնի Կառավարման խորհրդի (այսուհետ նաև՝ ԿԽ) հերթական նիստ:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում

Զեկուցողներ՝ Գ. Շախբազյան

Որակի ապահովման վարչության պետ՝ Գ. Գիլոյան

2. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում.

Զեկուցող՝ Որակի ապահովման վարչության պետ՝ Գ. Գիլոյան

3. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման քննարկում և հաստատում.

Զեկուցող՝ Որակի ապահովման վարչության պետ՝ Գ. Գիլոյան

Կառավարման Խորհրդի նախագահի՝ 2022 թվականի հունվարի 25-ի N 1-Լ որոշմամբ ԿԽ նիստը վարելու հետ կապված աշխատանքները վերապահվել են ԿԽ անդամ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գ. Սանոսյանին:

Նիստին մասնակցել են՝

Գ. Սանոսյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Հովհաննիսյան (ներկայությունն ապահովել է ներկայացուցչի միջոցով)	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ն. Տերյան (ներկայությունն ապահովել է ներկայացուցչի միջոցով)	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ս. Թովմասյան	- ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար
Մ. Սանդոյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի կառավարման խորհրդի անդամ (համաձայնությամբ)
Ա. Կարապետյան	- «Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)

Նիստը նախագահողը ողջունեց նիստի մասնակիցներին և խոսքը տրվեց ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավար Գ. Շախբազյանին՝ օրակարգի 1-ին հարցը՝ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան հաշվետվությունը ներկայացնելու համար:

Գ. Շախբազյանի կողմից ներկայացվեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան հաշվետվությունը: Տարեկան հաշվետվության մեջ բարձրացված հարցերի և խնդիրների կապակցությամբ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Հովհաննիսյանն առաջարկեց մշակել ճանապարհային քարտեզ՝ խնդիրներին առավել օպերատիվ լուծում տալու համար:

«Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Կարապետյանը բարձրացրեց բազմաբնակարան բնակելի շենքերի նկատմամբ պետական վերահսկողության իրականացման հստակ մեխանիզմների մշակման և գործարկման անհրաժեշտության և հրատապության հարցը: Նշված հարցը որոշվեց քննարկել ոլորտի քաղաքականությունը մշակող և ոլորտի շրջանակներում գործունեություն ծավալող բոլոր մարմինների հետ համատեղ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արդարադատության նախարարի տեղակալ Ա. Հովհաննիսյանի և Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանի ներկայացուցչությունը ԿԽ նիստին ապահովված էր ներկայացուցիչների միջոցով, որոշվեց օրակարգում ընդգրկված հարցերի քվեարկությունն իրականացնել հեռակա կարգով՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Էլեկտրոնային քվեարկությամբ հեռակա քվեարկությունը տեղի ունեցավ 2022 թվականի հունվարի 26-27-ը ներառյալ:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Փիլոյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (խորհրդի նախագահ)
Գ. Սանոսյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Հովհաննիսյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Ղուլարյան	- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Ս. Թովմասյան	- ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար
Մ. Սանդոյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի կառավարման խորհրդի անդամ (համաձայնությամբ)
Ա. Կարապետյան	- «Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ն. Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Դանիելյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Մ. Հովհաննիսյան	- «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի

քաղաքաշինության ամբիոնի պրոֆեսոր,
ճարտարապետության թեկնածու (համաձայնությամբ)

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 9 կողմ, 0 դեմ:

«Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Կարապետյանը, օրակարգում ընդգրկված 1-ին հարցին քվեարկելով կողմ, ներկայացրել է նաև դիտարկումներ՝ կապված ՀՀ-ում բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի պահանջների կատարման նկատմամբ վարչական վերահսկողության համակարգի ձևավորման հետ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան հաշվետվությունը.

2. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվությունն ընդունվեց ի գիտություն:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Փիլոյան**

Կառավարման խորհրդի քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր կատարող՝ **Ա. Հայրապետյան**